

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի ապրիլի 11-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ վարդապետական թեկերի բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ՝ հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը և Ռումինիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Արամայիս աբեղա Շլուկյանը, նախապես իրենց թեկերը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբության հանձնարարությամբ կազմված հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը (նախագահ), Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար, հոգևոր ճեմարանի դասախոս պարոն Պարգև Շահբազյանը և հոգևոր ճեմարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ պարոն Պետրոս Բեդիրյանը, քննելով թեկերը, իրենց վեկուցագիրը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Հանդիսությանը բացման խոսքով հանդես եկավ Տ. Ներսես եպս. Պոլատյանը: Այնուհետև հանձնաժողովի անդամ Պետրոս Բեդիրյանը ներկաների ուշադրությանը ներկայացրեց հանձնաժողովի գրավոր կարծիքը Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանի թեկի վերաբերյալ:

Առաջինն իր թեկի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը:

Նրա աշխատանքի թեման էր՝

«Ճգնավորական և վանական շարժումների կազմավորումն ու զարգացումը մինչև Ե դարի Ա կեսը»:

Աշխատությունը ուներ հետևյալ գլուխները.

ա) Երկու խոսք.

բ) Հայաստանում քրիստոնեության տարածման նախապայմանները.

գ) Հայաստանում ճգնավորման շարժման հետքերը մինչև Դ դարի առաջին կեսը.

դ) Մար Ավգինը, Հակոբ Մծբնա հայրապետը և նրանց գործունեությունը Հայաստանում.

ե) Եվստաթեոս Սեբաստացին, Բարսեղ Սեծը և վանական կյանքի կազմավորումը Հայաստանում.

զ) Վանականությունը Հայաստանում ըստ «Վարք Մաշտոցի»:

Հայկազուն հայր սուրբի թեկի պաշտպանությունից հետո հանձնաժողովի անդամ Պարգև Շահբազյանը ներկայացրեց Տ. Արամայիս աբեղա Շլուկյանի թեկի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը: Ապա իր թեկի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Արամայիս աբեղա Շլուկյանը:

Նրա աշխատանքի թեման էր՝

«Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու այժմեությունը»:

Աշխատությունը ուներ հետևյալ գլուխները.

ա) Նախաբան.

բ) Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու ուսմունքի մասին.

գ) Հայաստանյայց Եկեղեցու դիրքորոշումը

և նրա ուսմունքը քրիստոնեաբանության հարցում.

դ) Վերջաբան:

Թեկերի բանավոր պաշտպանությունից հետո Տ. Ներսես եպս. Պոլսպալյանը հրապարակեց հանձնաժողովի դրական կարծիքը՝ երկու աբեղաներին վարդապետական աստիճան շնորհելու մասին:

Այնուհետև, հանդիսության վերջում, Վեհափառ Հայրապետը Իր շնորհավորանքի և օրհնության խոսքն ուղղեց իրենց թեկերը հաջողությամբ պաշտպանած երկու երիտասարդ աբեղաներին՝ գնահատելով նրանց կատարած աշխատանքը և մաղթելով, որ «...նրանցից ամեն մեկն իր միջավայրում, իր պայմաններում առավելագույն աշխատանքի եռանդը ներդնի Հայ Եկեղեցու պայծառության համար»: Վերջում Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ նրանք «միշտ կմնան ուխտապահ կինվորները Հայ Եկեղեցու և Մայր



Մի պահ մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչության արարողությունից

Աթոռ Ս. Էջմիածնի, կլինեն նվիրված սպասավորները մեր հավատացյալ ժողովրդի»:

Հաջորդ օրը, ապրիլի 19-ին, ժամը 12-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվեց «Կանոն մասնաւոր իշխանութեան» վարդապետական տվչության կարգի արարողությունը:

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Տ. Հայկակուն աբեղա Նաջարյանի և Տ. Արամայիս աբեղա Շլուկյանի վարդապետական աստիճանների շնորհումը կատարեց Տ. Ներսես եպս. Պոլապալյանը: Արարողությանը ներկա էին Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը, Տ. Հովսեփ աբեղա Հակոբյանը, Տ. Եղիշե քին. Բաղրամյանը, Տ. Արտակ քին. Սիմոնյանը և Տ. Նարեկ քին. Մատարյանը:

Արարողության ավարտին Տ. Ներսես եպս. Պոլապալյանը հետևյալ բովանդակալից խրատականն ուղղեց նորընծա վարդապետներին.

««Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ուխտս դիք և կատարեցէք»:

Սիրելի նորընծա միաբանակից եղբայրներ, Գեղեցիկ ու սրտագրավ մի առիթով է, որ հավաքվել ենք Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում, հովանու ներքև քրիստոնեական Եկեղեցու մեծ Վարդապետի՝ Հիսուս Քրիստոսի, և նրա արժանավոր աշակերտի՝ Հայաստանյայց Եկեղեցու երախտավոր Ս. Մեսրոպ Մաշտոց եռամեծ վարդապետի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության համար գեղեցիկ ավանդություն է դարձել ամեն անգամ գալ այս սրբավայրը, ծնրադրել սուրբ վարդապետի շիրիմի առջև՝ ստանալու համար այստեղ վարդապետական աստիճան և այդ առթիվ վերանորոգելու ուխտը՝ հավատարմորեն ծառայելու Հայ Եկեղեցուն և հայ մշակույթին: Նույն ճանապարհով և դուք, սիրելի հոգևոր եղբայրներ՝ Տ. Հայկակուն աբեղա Նաջարյան և Տ. Արամայիս աբեղա Շլուկյան, եկել եք այսօր այստեղ, այս սրբական վայրում՝ ստանալու աստվածային և երկնավոր շնորհը վարդապետելու:

Քսանմեկ տարիներ առաջ էր, 1962 թվականին, երբ մեր հերթին մենք էլ՝ չորս աբեղաներ, մեր երիտասարդական տիոց ծաղկման սկզբին, ձեվ նման եկանք այս սուրբ խորանի առջև ծնրադրելու և ստանալու՝ ի Տեր հանգուցյալ և բարեհիշատակ Գերաշնորհ Տ. Հայկակուն արքեպիսկոպոս Աբրահամյանի ձեռամբ, մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

Ժամանակները փոխվեցին, տարիներն անցան: Այժմ վարմանքով եմ նկատում, որ հերթը հասել է ինձ՝ տրուպիս վարդապետաց, փոխանցելու Սուրբ Հոգու շնորհները ձեվ:

Շիրիմի տակ անթաղ ու շիրիմից դուրս ապրող մշտակենդան շունչը Մեսրոպյան՝ թող ուժ և իմաստություն շնորհի ձեվ. լցրե՛ք նրանով ձեր էությունը և հերկեցե՛ք բանական անդաստանները մեր որդիների՝ լինելով «մշակք առանց ամօթոյ»: Ամեն մեկ հայ վարդապետի վեղար՝ նրա կյանքի նավի առաջաստն է, նրան հեռու-հեռուները քարոզության տանող: Կյանքը հարաշարժ ծով է և փոթորկուն օվկիան, հողմերը՝ սաստկաշունչ, փորձությունը՝ անխուսափելի, նկուն հոգիների համար. եղե՛ք հավատքով ու նվիրումով լի անհողդողդ նավորդիներ այդ ալեկոծ օվկիանում:

Նույն այս եկեղեցում էր, ինչպես վերևում նշեցի, որ չորս աբեղաներ վարդապետելու իրավունք ստացանք: Այդ խմբից միայն ես մնացի: Իմ ընկերների նավերը խորտակվեցին. ոմանք ավազախրվեցին, ոմանք խարակների ընդհարվեցին և ոմանք էլ կյանքի վայելքներից հրապուրված՝ ալիքների մեջ ընկլուզվեցին:

Այս առթիվ ցանկանում եմ մեկ խորհուրդ տալ ձեվ. ամեն անգամ, երբ փորձության ալիքը հասնի, և կյանքը ձեվ համար դառնա դառն ու դաժան և ծառայության լուծը՝ անբերելի, նայեցեք վե՛ր՝ Գողգոթայի բարձունքի Խաչյալին, որպեսզի նա ձեվ ուժ պարգևի, նայեցեք վե՛ր՝ Լուսավորչի հավատարծարծ կանթեղին՝ կայծուր ստանալու նրանից: Կյանքում միշտ փնտրեցեք ավնիվն ու բարին, վեհն ու գեղեցիկը՝ դրանցով նորոգելու ձեր ծառայության ուխտը, որ եղավ նաև ուխտը Հայաստանյայց Եկեղեցու բոլոր եռամեծ վարդապետների ու լուսավոր, պայծառ դեմքերի:

Տալիս եմ ձեվ վարդապետական այս գավազանը, նմանությամբ Մովսեսի գավազանի, որով նա առաջնորդեց իր ժողովրդին դեպի խաղաղություն: Տալիս եմ այն՝ անապատում բարձրացված ալնձայա օձի գավազանի նմանությամբ, որպեսզի նրանով մխիթարություն պարգևեք տառապող հոգիներին: Բայց տալիս եմ այն՝ հատկապես Խաչափայտի խորհրդով, որպեսզի ծառայության ու զոհողության ճամփով հասնեք գերագույն հաղթանակին ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

Բա՛ց են կյանքի դռները ձեր առաջ. նե՛րս մտեք՝ զինված հավատքով և իմաստությամբ:

Բարի ճանապարհ, հաջողություն և Տերն ընդ ձեվ: Ամեն»:

Վերադառնալով Մայր Աթոռ՝ նորընծա վարդապետները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու նրա հայրական օրհնությունը: Նորին Սրբությունը նրանց

պարգևատրեց վարդապետական լանջախաչերով:

*
* *

Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյան
Ավագանի անունով՝ Վրեժ:

Ծնվել է 1952 թ. Հալեպում: Նախնական կրթությունը սկզբում ստացել է Բեյրութի Թեքեյան, իսկ հետո Հովակիմյան-Մանուկյան վարժարաններում: 1967 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և ավարտել այն 1973 թ.: Սարկավագ է ձեռնադրվել 1972 թ.:

1974—1975 թթ. բարձրագույն աստվածաբանական ուսումն է ստացել Քենթրբերիի Ս. Օգուստին քոլեջում՝ հետևելով հովվական աստվածաբանության դասընթացներին: 1975—1978 թթ. ուսումը շարունակել է Լոնդոնի համալսարանի Քինգզ քոլեջում և ավարտելուց հետո ստացել է «Պսակավոր աստվածաբանության» աստիճան՝ պատվո հիշատակությամբ: 1978—1979 թթ. հաճախել է Շոտլանդիայի Ս. Անդրեաս համալսարանը: 1979—1981 թթ. ծառայել է որպես հոգևոր հովիվ լոնդոնահայ գաղութի Ս. Պետրոս եկեղեցում: 1981 թ. վերադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հոգևոր ճեմարանում դասավանդում է կրոնական առարկաներ՝ միաժամանակ վարելով փոխտեսչի պաշտոն:

Տ. Արամայիս վարդապետ Շլուկյան
Ավագանի անունով՝ Արա:

Ծնվել է 1957 թվականին Բուխարեստում, որտեղ և ստացել է իր նախնական և միջնակարգ կրթությունը: 1974 թվականին ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը և ավարտել է 1980 թ.: 1978 թ. ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1981 թվականին ուղարկվել է Ռումինիա և նույն թվականին ձեռնադրվել կուսակրոն քահանա: Ներկայումս ծառայում է հյուսիսային Ռումինիայի հայկական գաղութում որպես հոգևոր հովիվ:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի նորընծա երիտասարդ միաբաններին մասնավոր վարդապետական իշխանություն ստանալու առիթով և ցանկանում նրանց հետագա արդյունավետ հոգևոր գործունեություն ի փառս Հայ Առաքելական Եկեղեցու: